ՏԱՎՈՒՇ. սոցիալ-մշակութային գործընթացներ, *Երևան, «Գիտություն» հրատ., 2014, 360 էջ:*

Վերջերս լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի գիտաշխատողների «Տավուշ. սոցիալ-մշակութային գործընթացներ» հեղինակային աշխատությունը՝ Լ. Վարդանյանի և Ս. Վարդանյանի խմբագրությամբ: Գիրքը նվիրված է էթնոսոցիոլոգիայի բաժնի հիմնադիր՝ վաստակաշատ ազգագրագետ, պ. գ. դ. Էմմա Տիգրանի Կարապետյանի հիշատակին:



Աշխատությունը վերաբերում է Տավուշի մարզի արդի էթնոմշակութային գործընթացների ուսումնասիրությանը. այն խրախուսելի է հետխորհրդային Հայաստանի բնակչության սոցիալ-մշակութային համակարգում տեղի ունեցող փոփոխությունների, նոր արժեքների ձևավորման ու կայացման շարժընթացը պարզաբանելու առումով: Հետազոտությունն առաջին լուրջ փորձն է, որն ընդգրկում է պատմական մի ողջ ժամանակահատված՝ սկսած խորհրդային վերջին տասնամյակից մինչև մեր օրերը: Թեման իրականացնող խումբը (Համլետ Սարգսյան, Միհրան Գալստյան, Թամար Զաքարյան, Լիլյա Վարդանյան, Սամվել Մկրտչյան, Ռուբեն Օհանջանյան) մասնագիտական բարձր մակարդակով է իրականացրել իր առջև դրված բարդ ու կարևոր խնդիրը:

Հետազոտությունը հեղինակային խմբի կողմից իրականացվել է 2007–2008 թթ. և 2011–2012 թթ. կատարված դաշտային աշխատանքների արդյունքում ձեռք բերված արժեքավոր նյութերի հիման վրա: Այս տեսակետից արժանին պետք է մատուցել հեղինակային խմբին, քանի որ հիշյալ նյութերը համեմատվել են 1980-ական և 1993 թ. բաժնի կողմից՝ նույն ընտրանքով իրականացված էթնոսոցիոլոգիական հարցման արդյունքների հետ: Դրանք հնարավորություն են ընձեռել վեր հանելու մարզի բնակչության էթնոժողովրդագրական և միգրացիոն գործընթացներում, ընտանիքում, ընտանեկան ծիսահամալիրում, տոնական և կրոնական վարքագծում, ինչպես նաև գեղարվեստական մշակույթում արձանագրված փոփոխությունների միտումները:

Նյութերի հավաքման նպատակով Տավուշի բնակչության շրջանում կիրառվել են զանգվածային, խորացված, փորձագիտական, ֆոկուս-խմբային հարցման ու դիտման մեթոդները: Ընդհանուր առմամբ Իջևան քաղաքում, Այգեհովիտ, Գետահովիտ, Ծաղկավան, Դիտավան

գյուղական համայնքների բնակչության շրջանում իրականացվել են 752 հարցաթերթային հարցումներ: Ուսումնասիրվել են նաև մարզին վերաբերող վիճակագրական, արխիվային և այլ կարգի արժեքավոր փաստաթղթային նյութեր, կատարվել լուսանկարահանումներ և առդիո ձայնագրությունների վերծանումներ, որոնք ամփոփվել են աշխատության մեջ:

Արդիականության, մասնավորապես կիրառական առումով, հարկ ենք համարում ընդգծել ևս մեկ կարևոր հանգամանք. հեղինակային խմբի կողմից Տավուշում իրականացրած հետազոտությունները հնարավորություն են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ, որոնք կարող են նպաստել մարզի սոցիալ-մշակութային կյանքի հետագա զարգացմանը և նոր մոտեցումների մշակմանը:

Քանի որ գրախոսվող հետազոտությունը հեղինակային խմբի համատեղ աշխատանքի արդյունք է, ուստի նպատակահարմար ենք գտնում յուրաքանչյուր թեմային անդրադառնալ առանձին-առանձին:

1. Տավուշի մարզի բնակչությունը XIX դ. – XXI դ. սկզբներին (էթնոժողովրդագրական ուսումնասիրություն) (հեղինակ՝ Հ. Սարգսյան): *Այս բաժնում համառոտ անդրադարձ է կատարվել Տավուշի մարզի ֆիզիկաաշխարհագրական բնութագրին, տարածքի պատմական անցյալին, բնակավայրերի ու բնակչության ձևավորման պատմությանը, տնտեսության հիմնական ճյուղերին ու վարչատարածքային փոփոխություններին:*

Հեղինակը բազմաբնույթ աղբյուրների (արխիվային նյութեր, ծխամատյաններ, չափաբերական մատյաններ, բնակչության հաշվառումների արդյունքներ, մարդահամարների տվյալներ ու վերլուծություններ, թեմատիկ քարտեզներ և այլն) հիման վրա ներկայացրել է մարզի էթնոժողովրդագրական գործընթացների շուրջ 200-ամյա բնութագիրը, հանգամանորեն կանգ առել բնակչության թվի, կազմի փոփոխություններին, տեղաբաշխման առանձնահատկություններին, տեղաշարժերի բնույթին և ուղղություններին, դրդապատճառներին: Կարևոր տեղ է հատկացրել նաև բնակչության վերարտադրության հիմնախնդիրներին՝ առանձնահատուկ ուշադրության արժանացնելով բնական ու տարածքային (միգրացիա) շարժերին, որոնցով էլ պայմանավորված է բնակչության թվի շարժընթացը:

Կարծում ենք բաժինն առավել արժեքավոր են դարձրել ըստ բնակավայրերի բնակչության թվի ու կազմի շարժընթացը, վերարտադրությունը ներկայացնող բազմաթիվ աղյուսակները և գրաֆիկները, ինչպես նաև լուսանկարներն ու քարտեզները:

2. Աշխատանքային միգրացիան Տավուշում (հեղինակ՝ Մ. Գալստյան): *Բաժնում քննարկվում են աշխատանքային միգրացիային առնչվող մի շարք հիմնահարցեր: Դրանք են՝ աշխատանքային միգրացիայի պատճառները՝ միգրանտների սեռատարիքային, կրթական, ընտանեկան սոցիալ–մասնագիտական կազմը, ինչպես նաև աշխատանքային միգրանտների ձևավորման աղբյուրները և ուղիները: Հեղինակն աշխատանքային միգրացիան դիտարկում է որպես մարզի բնակչության*

եկամուտների ձևավորման հիմնական աղբյուր՝ նշելով ուղարկված գումարների ծախսերի ոլորտը (ուսման վարձ, պարտքեր, բնակարանի վերանորոգում և այլն): Նրա ուշա-դրության կենտրոնում են այլ էթնիկական միջավայրում տեղի բնակչության հետ միգրանտների ինտենսիվ շփումների հետևանքով մշակութային փոխազդեցությունների, վարքի նոր ձևերի, նորմերի ու արժեքների ձևավորման, լեզվական վարքագծի փոփոխության, միջէթնիկ ամուսնությունների տարածման հարցերը: Կարևորվում է նաև միգրացիայի հետևանքների քննարկումը: Հեղինակն ուշադրություն է դարձնում մարզում միգրացիայի ունեցած ժողովրդագրական բացասական հետևանքներին և ընտանիքի մոդելի փոխակերպումների խնդիրներին: Հեղինակի կարծիքով՝ աշխատանքային միգրացիայի արդյունավետ կառավարման շնորհիվ հնարավոր է այն ծառայեցնել մարզի զարգացման նպատակներին ու մեղմել դրա բացասական հետևանքները:

3. Ընտանիքը և ընտանեկան հարաբերությունները Տավուշի մարզում (հեղինակ՝ Թ. Զաքարյան): *Հեղինակի քննարկման նյութը վերաբերում է միասերունդ, երկսերունդ և եռասերունդ ընտանիքներում ներքին փոխհարաբերություններին, որոնք դիտարկվում են սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության տիրույթում: Շատ կարևոր են ընտանիքի ներսում սերունդների միջև (ծնող, զավակ) ավանդաբար ձևավորված հարաբերությունների և մեր օրերում ընթացող փոփոխությունների մասին հեղինակի դիտարկումները: Հոդվածում շոշափվում են դրացիական հարաբերություններն ու փոխօգնության ձևերը՝ պայմանավորված ավանդական ու արդիական գործոններով:*

4. Տավուշցիների ընտանեկան ծիսակարգը (հեղինակ՝ Լ. Վարդանյան): *Այս բաժնում համեմատական վերլուծությամբ փորձ է արվում պարզել հայ ժողովրդի ընտանեկան ավանդական ծիսակարգի պահպանման և կենցաղավարման փուլերը, նորամուծություններն ու դրանց հետագա զարգացման միտումները: Ուշագրավ և արժեքավոր են հեղինակի դիտարկումները՝ կապված հարսանիքի, ամուսնության առանձին փուլերի հետ: Այստեղ քննարկվել է խորհրդային և հետխորհրդային փուլերում տավուշցիների ամուսնա-հարսանեկան ծիսակարգում կատարված փոփոխությունները:*

Բաժնում քննարկվում է նաև հուղարկավորման ծեսը: Հեղինակը, իրավամբ նշելով այդ ծեսի պահպանողական լինելու հանգամանքը, բարեխղճորեն նշում է ժամանակի թելադրանքով ծեսում տեղ գտած նորամուծություններն ու արդի փուլերին բնորոշ որոշ փոփոխություններ:

5. Տավուշցիների տոնական և կրոնական վարքագիծը (հեղինակ՝ Ս. Մկրտչյան): *Բաժնում ներկայացվում է տոների և հիշատակի օրերի տարածվածության համեմատական պատկերը: Շատ կարևոր է, որ բնակչության տոնական վարքագիծը դիտարկվել ու քննարկվել է ընտանեկան, ազգակցական, դրացիական և համայնական միջավայրերում, ինչպես նաև՝ ըստ տարիքային ու սոցիալ-մշակութային այլ հատ-*

կանիշների: Հատուկ ուշադրության կենտրոնում է Վարդավառի տոնը, որն իր տարածմամբ գրեթե համազոր է Նոր տարվան: Ուշագրավ է, որ տարածաշրջանում բնակվող այլ էթնիկական հանրույթները ևս մասնակից են հիշյալ ավանդական տոնին:

Անդրադառնալով բնակչության տոնական վարքագծին՝ հեղինակը հանգամանալից վերլուծել է եկեղեցի կամ քրիստոնեական այլ սրբավայրեր այցելելու հիմնական դրդապատճառները, ինչպես նաև հավատքի վարքագծի փոփոխություններն ըստ տարիքային, սեռային և կրթական հատկանիշների: Ուշագրավ է, որ ներկայում ոչ միայն Տավուշում, այլև Հայաստանում առհասարակ նկատվում է կրոնական վարքագծի աճ՝ հատկապես երիտասարդության շրջանում:

6. Գեղարվեստական մշակույթը Տավուշում (հեղինակ՝ Ռ. Օհանջանյան): *Վերջին բաժնում փորձ է արվում բացահայտել գեղարվեստական մշակույթի սպառման արդի վիճակը Տավուշում և այդ գործընթացների փոփոխման միտումները 1980–2012 թթ. ընկած ժամանակահատվածում: Այստեղ ուրվագծվել են գեղարվեստական մշակույթի հիմնական ոլորտների՝ տպագիր արտադրանքի, երաժշտության, կինոյի ու թատերական արժեքների սպառման գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների հիմնական միտումները: Հեղինակն անդրադարձել է նաև այդ ոլորտների զարգացմանը խոչընդոտող գործոններին, մասնավորապես որոշ գրադարանների և մշակույթի տների անմխիթար վիճակին, որը, ի դեպ, ունի կիրառական նշանակություն:*

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք, որ առանձնակի ուշադրության են արժանի գրքում տեղ գտած աղյուսակներն ու քարտեզները, որոնք հիմնավորում են ներկայացված նյութը: Գրքում զետեղված գունավոր լուսանկարները, ըստ էության, ֆոտոփաստաթղթեր են, որոնք առավել տեսանելի և ընկալելի են դարձնում աշխատանքի ողջ բովանդակությունը: Գիրքն ունի ռուսերեն և անգլերեն ամփոփումներ, հագեցած է գիտատեղեկատվական աղբյուրներով՝ համառոտագրություններ, գրականության ցանկեր:

Աշխատությունը նոր խոսք է հետխորհրդային շրջանի Հայաստանի սոցիալ-մշակութային կյանքի ուսումնասիրության մեջ: Ցանկալի կլիներ նման աշխատանքներ ունենալ Հայաստանի մյուս մարզերի վերաբերյալ ևս:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ